Հավելված N 1
ՀՀ կառավարության 2021 թվականի
դեկտեմբերի 23-ի N 2111 - Ն որոշման

«VIII. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԱՎԱԳ ԵՎ ԿՐՏՍԵՐ ՍՊԱՅԱԿԱՆ, ԱՎԱԳ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԵՎ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԸ

94. Գլխարկ՝ կեպի ձմեռային

Կեպի գունաքողարկվող, սև, մուգ փիրուզագույն կտորից, բաղկացած է թասակից, համապատասխան գույնի երկարացված գլխարկահովհարից և սև գույնի արհեստական մորթե ականջակալներից: Թասակը չորստապականի է, առջևի կենտրոնական մասում կարվում է ասեղնագործած փոքր գլխարկանշան:

95. Գլխարկ՝ կիսաբրդյա (ամենօրյա կամ տոնական)

Մուգ փիրուզագույն կտորից: Կազմված է սև, լաքապատ գլխարկահովհարից և գլխարկաբոլորքից, որի վրա 2 արծաթագույն կոճակով ամրացվում է սև զարդապարան (գոտի): Գլխարկաբոլորքը սև արհեստական կաշվից՝ ցանցատիպ նախշով: Առջևի կենտրոնական մասում ամրացվում է մեծ գլխարկանշան:

96. Բերետ (հատուկ ստորաբաժանումների համար)

Սև, բոսորագույն մահուդե կտորից: Բաղկացած է 4 մասից՝ գլխամաս, երկու կողային մաս և շրջանակի փակման մաս: Մշակվում է աստառով: Բերետի առջևի կենտրոնական մասում կարվում է ասեղնագործած փոքր գլխարկանշան, որի աջ կողմից կարվում է Հայաստանի Հանրապետության եռագույնի տեսքով ժապավեն:

97. Կեպի սպորտային ամառային

Կեպին սև, մուգ կապույտ կտորից: Բաղկացած է 6 կտորից բաղկացած թասակից և երկարացված՝ կոշտ կորացված գլխարկահովհարից: Թասակի առաջամասը կոշտացված: Ետևի մասում մետաղյա կարգավորիչ: Առջևի կենտրոնական մասում կարվում է ասեղնագործած փոքր գլխարկանշան:

98. Վերարկու՝ ձմեռային, բրդյա, ուսադիրներով

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 3-րդ կետում նկարագրված ձմեռային վերարկուին՝ առանց կարակուլե օձիքի: Օձիքի վրա կարվում են երկու դափնեճյուղերով մետաղական խորհրդանշաններ՝ դափնեճյուղեր, կենտրոնում Հայաստանի Հանրապետության ոստիկանության խորհրդանիշը, որի վրա դաջված է «ՀՀ» հապավումը:

99. Կիսավերարկու՝ ձմեռային, ուսադիրներով

Սև, գունաքողարկված կտորից: Կիսավերարկուն բաղկացած է լանջափեշերից, թևքերից, կանգուն օձիքից (ներսի կողմից հաստ բամբակյա գործվածք), մինչև գոտկատեղը ձգվող ուղիղ ուրվագծով, գոտիով: Հետնամասում շղթայով փակվող ներկարված գրպանից (որի մեջ տեղադրվում է անձրևանոցը), լանջափեշերի ներքևի մասում՝ թեք ներկարված գրպաններ, իսկ վերևի մասում ներկարված ձևավոր կափույրով կոճակով կոճկվող գրպաններ: Կիսավերարկուի գոտու կողքային մասերն ունեն 12-18 սմ երկարությամբ առաձգական ժապավեն: Կոճկվում է կափույրով ծածկվող շղթայով: Թիկունքը՝ վերին կտրվածքով: Թևքերի թեզանիքները՝ առաձգական ժապավենով: Աստառը մետաքսե, ձախ կողմում՝ ծոցագրպան: Ուսադիրները կիսավերարկուի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ վրադիրներով: Թիկունքի եզրակարի վերևի մասում կարվում է «POLICE», իսկ առջևի ձևավոր կափույրով աջ գրպանի վերևի մասում ամրացվում է «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» մակագրությամբ ասեղնագործված բառերը: Առջևի ձևավոր կափույրով ձախ գրպանի վերևի մասում կարվում է կպչունակ՝ վկայականի կտորե տարբերանշանն ամրացնելու համար:

100. Տարազաբաճկոն -տաբատ՝ կիսաբրդյա, ուսադիրներով (ամենօրյա կամ տոնական)

1) Մուգ փիրուզագույն կտորից, միափեշ, 4 արծաթագույն կոճակները տեղադրված են միաշարք: Օձիքը հետծալված, կարմիր եզրակարով: Օձիքի վրա կարվում են երկու դափնեճյուղերով մետաղական խորհրդանշաններ՝ դափնեճյուղերի կենտրոնում Հայաստանի Հանրապետության ոստիկանության խորհրդանիշը, որի վրա դաջված է «ՀՀ» հապավումը: Տարազաբաճկոնի 2 փեշերի ներքևի մասերում՝ ձևավոր կափույրով ներկարված գրպաններ, կրծքամասի 2 կողմում

տեղադրված են կոճակով կոճկվող կափույրով վրադիր 2 գրպաններ: Հետևամասում՝ բացվածք, ձախ կողմում ունի ծոցագրպան: Թևքերը՝ երկու կտորից, որոնք թեզանիքի մասում միացվում են կարմիր եզրաքուղով: Աջ թևքի թեզանիքի վերևի մասում կարվում է Հայաստանի Հանրապետության եռագույնի տեսքով ժապավեն: Ուսադիրները՝ կարվող.

2) Տաբատը մուգ փիրուզագույն կտորից, ուղիղ ուրվագծով. մետաքսյա աստառով, կողագծերը կարմիր եզրաքուղով: Գոտին՝ գոտեմակօղերով, կոճկվում է երկու կոճակով և շղթայով: Արտաքին գրպանները թեք են, տեղադրված եզրաքուղից առաջ: Հետևամասի աջ կողմում կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան:

101. Բաճկոն - տաբատ կեպիով՝ կիսաբամբակյա, ուսադիրներով

1) Բաճկոնը կարվում է սև, գունաքողարկված կտորից: Թևքերը՝ կոճակով կոճկվող: Հետ ծալվող օձիքով, մինչև գոտկատեղը ձգվող ուղիղ ուրվագծով, գոտիով: Կոճկվում է կափույրով ծածկվող շղթայով: Լանջափեշերի ներքևի մասում՝ թեք ներկարված կպչուն ժապավենով փակվող գրպաններ: Կրծքամասում կոճակով կոճկվող ձևավոր կափույրներով 2 արտաքին գրպաններով: Թիկունքը՝ վերին կտրվածքով: Բաճկոնի գոտու կողքային մասերն ունեն 12-18 սմ երկարությամբ առաձգական ժապավեն: Աստառը սև կամ մուգ երանգի բամբակյա կտոր: Թիկունքի եզրակարի վերևի մասում կարվում է «POLICE», իսկ առջևի ձևավոր կափույրով աջ գրպանի վերևի մասում ամրացվում է «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» մակագրությամբ ասեղնագործված բառերը: Առջևի ձևավոր կափույրով ձախ գրպանի վերևի մասում կարվում է կպչունակ՝ վկայականի կտորե տարբերանշանն ամրացնելու համար.

2) Տաբատը սև, գունաքողարկված կտորից, ուղիղ ուրվագծով: Գոտին՝ գոտեմակօղերով, կոճկվում է մեկ կոճակով և շղթայով: Արտաքին գրպանները թեք են: Հետևամասի աջ կողմում կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան.

3) Կեպին սև, գունաքողարկված կտորից: Բաղկացած է թասակից և երկարացված գլխարկահովհարից: Երկու կողմից ունի օդանցքներ: Առջևի կենտրոնական մասում կարվում է ասեղնագործած փոքր գլխարկանշան:

102. Տաբատ՝ կիսաբամբակյա ամառային

Սև, գունաքողարկված կտորից, ուղիղ ուրվագծով: Գոտին՝ գոտեմակօղերով, կոճկվում է մեկ կոճակով և շղթայով: Արտաքին գրպանները թեք են: Թեք գրպանների ներքևի մասում վրադիր, կափույրներով մեծ գրպաններ: Հետևամասի աջ կողմում կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան:

103. Վերնաշապիկ՝ կարճաթև կամ երկարաթև, ուսադիրներով

Կառուցվածքով և ձևով նման են սույն հավելվածի՝ համապատասխանաբար 7-րդ և 8-րդ կետերում նկարագրված վերնաշապիկներին:

104. Սվիտեր

Սև գույնի բրդյա գործվածքից, կլոր վզով: Կրծքամասում սվիտերի ամբողջ լայնքով կարվում է 3.5 սմ լայնությամբ կարմիր ժապավեն, որի վրա, առջևի մասում ասեղնագործվում են «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ», իսկ թիկունքի մասում՝ «POLICE» բառերը:

105. Փողկապ՝ սև, մուգ փիրուզագույն

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 9-րդ կետում նկարագրված փողկապին՝ առանց Հայաստանի Հանրապետության զինանշանի:

106. Վզպատ թաշկինակ՝ սպիտակ, մուգ գույնի

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 10-րդ կետում նկարագրված վզպատ թաշկինակին:

107. Մարտաբաճկոն (հատուկ ստորաբաժանումների համար)

Սև, սինթետիկ կտորից: Աստառը՝ սև ցանցավոր կտորից: Բաղկացած է առաջամասից և հետևամասից: Հետևամասը՝ 1 կտորից, առաջամասը՝ 2 կտորից, որոնք առաջամասի կենտրոնում իրար միանում են շղթայով: Առաջամասը հետևամասին կողային և ուսային հատվածներում իրար միանում են չափսերը մեծացնող և փոքրացնող ժապավեններով: Հետևամասում նախատեսված է կպչունակով փակվող կափույրով արտաքին կարված գրպան՝ թիկնոց ուսնոցի համար, գրպանից վերև սև երանգի կտորի վրա ասեղնագործված «POLICE» մակագրությամբ բառը:

108. Շապիկ ուսադիրներով ամառային

Սև, մուգ կապույտ, տրիկոտաժե, ուսադիրներով և ծալովի օձիքով: Ուղիղ ձևվածքով՝ տաբատի տակ դրվող: Առջևից 3 կոճակով կոճկվող բացվածք: Թևքերի

երկարությունը մինչև արմունկները, եզրամասերն առանձգական գործվածքով: Ուսային մասերը մշակված գունաքողարկված կամ սև կտորով: Առջևի ձախ կրծքամասում շղթայով փակվող ներկարված գրպան: Թիկունքի վերևի մասում կարվում են սև, մուգ կապույտ երանգի կտորի վրա ասեղնագործված «POLICE», իսկ աջ կրծքամասում «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» մակագրությամբ բառերը:

109. Շապիկ՝ տրիկոտաժե

Ուղիղ ձևվածքով, սև, գունաքողարկված, կարճաթև, կլոր օձիքով:

110. Ներքնաշոր՝ ձմեռային

111. Գոտի՝ սև, սինթետիկ

50 մմ լայնությամբ, պլաստմասսայե ճարմանդով, վրան հավաքվում են արտաքին ծառայության համար անհրաժեշտ պարագաների գրպանիկներ:

112. Գոտի՝ սև, տաբատի, սինթետիկ

35 մմ լայնությամբ, մետաղյա ճարմանդով:

113. Կոշիկ՝ կիսաճտքավոր

Սև գույնի կաշվից: Երեսամասը՝ ամբողջական առաջամասով, ճտքերի հետևամասերն ունեն երկարացված գոտի: Լեզվակը միացված է առաջամասին և ճտքերի ստորին մասին: Ներբանների եզրերը՝ վրաքաշվող մասերի հետ՝ կարերով, միացման մեթոդը՝ սոսնձով և գամերով: Ներդիրը՝ կաշվե (պադոշ), չամրացված:

114. Կոշիկ

Սև գույնի կաշվից: Երեսամասը՝ ամբողջական կամ կարով առաջամասով, կտրված հետևամասերով, ամրացված գոտիով: Հետևամասերի միացումն առաջամասերին՝ առանձգական ժապավենով կամ առջևից քուղերով կոճկվող: Հիմնական և միջնաստառները՝ կտորից, կոշտ քթամասերը և հետևամասերը՝ արհեստական կաշվից: Ներբանը ձևավորվում է մաշակայուն՝ պոլիվինիլքլորիդ նյութից՝ սոսնձով: Ներդիրը՝ կաշվե (պադոշ), չամրացված:

115. Կոշիկ սպորտային

Սև, բնական կաշվից, կտորից: Ներբանների եզրերը՝ վրաքաշվող մասերի հետ՝ կարերով, միացման մեթոդը՝ սոսնձով և կարերով: Ներդիրը՝ կաշվե (պադոշ), չամրացված:

116. Կիսագուլպա՝ կիսաբրդյա, մուգ

117. Կիսագուլպա՝ բամբակյա, մուգ

118. Ձեռնոց՝ բրդյա կամ սինթետիկ, հինգմատնյա, սև, սպիտակ

119. Թիկնոց-ուսնոց

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 21-րդ կետում նկարագրված թիկնոց-ուսնոցին:

120. Փողկապի ամրակ

121. Սև կամ մուգ երանգով սպորտային գլխարկ

122. Սև կամ մուգ երանգով դիմակ

Բրդյա գործվածքից, դեմքն ամբողջական ծածկող, բացառությամբ աչքերից և բերանից:

IX. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՋՈՐՔԵՐԻ ԱՎԱԳ ԵՎ ԿՐՏՍԵՐ ՍՊԱՅԱԿԱՆ, ԱՎԱԳ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԵՎ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱՋՄԻ ԿԻՆ ՋԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՁԳԵՍՏԸ

123. Գլխարկ՝ կեպի ձմեռային

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 94-րդ կետում նկարագրված ականջակալներով գլխարկին:

124. Գլխարկ՝ կիսաբրդյա (ամենօրյա կամ տոնական)

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 95-րդ կետում նկարագրված ականջակալներով գլխարկին:

125. Կեպի սպորտային ամառային

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 97-րդ կետում նկարագրված կեպիին:

126. Վերարկու՝ ձմեռային, բրդյա, ուսադիրներով

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 3-րդ կետում նկարագրված ձմեռային վերարկուին:

127. Կիսավերարկու՝ ձմեռային, ուսադիրներով

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 99-րդ կետում նկարագրված ձմեռային կիսավերարկուին:

128. Տարազաբաճկոն - կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ուսադիրներով (ամենօրյա կամ տոնական)

1) Տարազաբաճկոնը մուգ փիրուզագույն կտորից, միափեշ, 3 արծաթագույն կոճակները տեղադրված են միաշարք, կրծքամասը՝ սեղմոններով: Օձիքը հետծալված, կարմիր եզրակարով: Օձիքի վրա կարվում են երկու դափնեճյուղերով մետաղական խորհրդանշաններ, դափնեճյուղերի կենտրոնում Հայաստանի Հանրապետության ոստիկանության խորհրդանիշը, որի վրա դաջված է «ՀՀ» հապավումը: Տարազաբաճկոնի 2 փեշերի ներքևի մասերում՝ ձևավոր կափույրով ներկարված գրպաններ, կրծքամասի 2 կողմում տեղադրված են կոճակով կոճկվող կափույրով վրադիր 2 գրպաններ: Հետևամասում՝ բացվածք, ձախ կողմում ունի ծոցագրպան: Թևքերը՝ երկու կտորից, որոնք թեզանիքի մասում միացվում են կարմիր եզրաքուղով: Աջ թևքի թեզանիքի վերևի մասում կարվում է Հայաստանի Հանրապետության եռագույնի տեսքով ժապավեն: Ուսադիրները՝ կարվող.

2) Կիսաշրջազգեստը մուգ փիրուզագույն կտորից, ուղիղ կարվածքով, երկկողմանի սեղմոններով, աստառով: Գոտին՝ գոտեմակօղերով: Հետևամասում՝ բաց ծալվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով:

129. Բաճկոն–տաբատ կեպիով՝ կիսաբամբակյա, ուսադիրներով

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 101-րդ կետում նկարագրված համազգեստին:

130. Կիսաշրջազգեստ՝ կիսաբամբակյա ամառային

Գունաքողարկված կտորից, ուղիղ կարվածքով, երկկողմանի սեղմոններով, աստառով: Գոտին՝ գոտեմակօղերով: Հետևամասում՝ բաց ծալվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով:

131. Վերնաշապիկ՝ կարճաթև, երկարաթև, ուսադիրներով

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի՝ համապատասխանաբար 7-րդ և 8-րդ կետերում նկարագրված վերնաշապիկներին, ձախ շերտակարի փոխարեն կարվում է աջ շերտակար:

132. Սվիտեր

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 104-րդ կետում նկարագրված սվիտերին:

133. Փողկապ՝ սև, մուգ փիրուզագույն

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 9-րդ կետում նկարագրված փողկապին՝ առանց Հայաստանի Հանրապետության զինանշանի:

134. Վզպատ թաշկինակ՝ սպիտակ, մուգ գույնի

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 10-րդ կետում նկարագրված վզպատ թաշկինակին:

135. Մարտաբաճկոն (հատուկ ստորաբաժանումների համար)

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 107-րդ կետում նկարագրված մարտաբաճկոնին:

136. Շապիկ ուսադիրներով ամառային

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 108-րդ կետում նկարագրված շապիկին:

137. Շապիկ՝ տրիկոտաժե

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 109-րդ կետում նկարագրված շապիկին:

138. Գոտի՝ սև, տաբատի, սինթետիկ

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 112-րդ կետում նկարագրված գոտուն:

139. Կիսաճտքավոր կոշիկ

Սև գույնի կաշվից: Երեսամասը՝ ամբողջական կամ կտրված քթամասով, երկարացված ձևավոր հետևամասերով, կրունկը՝ մինչև 5 սմ բարձրության: Ճտքերի վերնամասերը ծալված աստառի հետ միացված են փափուկ միջադիրով: Լեզվակը միացված է առաջամասին:

140. Կոշիկ

Սև գույնի կաշվից: Երեսամասը՝ ամբողջական կամ կարով առաջամասով, հետևամասի և առաջամասի հետ ծալված եզրերով: Ներբանը ձևավորվում է

մաշակայուն՝ պոլիվինիլքլորիդ նյութից՝ սոսնձով: Կրունկը՝ մինչև 5 սմ բարձրության: Ներդիրը՝ կաշվե (պադոշ), չամրացված:

141. Կոշիկ սպորտային

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 115-րդ կետում նկարագրված կոշիկին:

142. Գուլպա՝ տրիկոտաժե

143. Ձեռնոց՝ բրդյա, սև, հինգմատնյա

144. Ձեռնոց ՝ սինթետիկ, սպիտակ, հինգմատնյա

145. Թիկնոց-ուսնոց

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 21-րդ կետում նկարագրված թիկնոց-ուսնոցին:

146. Փողկապի ամրակ

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 22-րդ կետում նկարագրված ամրակին:

X. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ, ԱՎԱԳ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԽՄԲԵՐԻ ԿՈԶՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԸ

147. Վերնաշապիկ ուսադիրներով կարճաթև

Մուգ կապույտ գույնի 60% պոլիէսթեր, 40% բամբակյա կտորից, ուսադիրներով և ծալովի օձիքով: Ուղիղ ձևվածքով՝ տաբատի տակ դրվող: Առջևից 3 կոճակով կոճկվող բացվածք: Թևքերի երկարությունը մինչև արմունկները, եզրամասերն առաձգական գործվածքով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան, աջ թևքի ուսամասից 60 մմ ներքև «Պարեկային ծառայություն» թևքանշան: Թիկունքի վերևի մասում կարվում են սպիտակ գույնով ասեղնագործված «POLICE», իսկ աջ կրծքամասում «Ոստիկանություն» մակագրությամբ բառերը և 25 մմ օղակ տեսախցիկի համար: Ձախ կրծքամասում կարվում է կրծքանշանի ներդիր: Ուսադիրները՝ հանվող:

148. Վերնաշապիկ ուսադիրներով կարճաթև

Մուգ կապույտ գունի կտորից, ուսադիրներով և ծալովի օձիքով: Ուղիղ ձևվածքով՝ տաբատի տակ դրվող: Առաջամասերին մշակված են ձևավոր կափույրներով վրադիր գրպաններ, որոնք կոճկվում են մեկ օղակ-կոճակով և վերևի մասում ունեն 25 մմ բացվածք՝ տեսախցիկի ու ռադիոկայանի խոսափողի համար: Ձախ կողային կարի վրա կա բացվածք, ինչպես նաև ձախ գրպանի մեջ՝ ալեհավաքի լարի անցկացման համար: Ուսամասից մինչև թևքի տակ կարվում է կրկնակի կտոր: Վերնաշապիկի առաջամասերին մշակվում է վրադիր կտոր, որի վրա մշակվում են օղակներ և կարվում կոճակներ: Առաջամասն ունի երկու արտաքին կարեր, իսկ թիկունքն ամբողջական է և երկայնքով ունի երեք արտաքին կարեր: Թևքերի երկարությունը մինչև արմունկ՝ մշակված թեզանիքով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան, աջ թևքի ուսամասից 60 մմ ներքև «Պարեկային ծառայություն» թևքանշան: Թիկունքի վերևի մասում կարվում է սպիտակ գույնով ասեղնագործված «POLICE» բառը: Ձախ կրծքամասում կարվում է կրծքանշանի ներդիր: Վերնաշապիկն ունի օդանցքեր՝ շնչողունակությունն առավելագույնին հասցնելու համար: Ուսադիրները՝ հանվող:

149. Վերնաշապիկ ուսադիրներով երկարաթև

Մուգ կապույտ գույնի կտորից, ուսադիրներով և ծալովի օձիքով: Ուղիղ ձևվածքով՝ տաբատի տակ դրվող: Առաջամասերին մշակված են ձևավոր կափույրներով վրադիր գրպաններ, որոնք կոճկվում են մեկ օղակ-կոճակով և վերևի մասում ունեն 25 մմ բացվածք՝ տեսախցիկի ու ռադիոկայանի խոսափողի համար: Ձախ կողային կարի վրա կա բացվածք, ինչպես նաև ձախ գրպանի մեջ՝ ռադիոկայանի խոսափողի լարի անցկացման համար: Ուսամասից մինչև թևքի տակ կարվում է կրկնակի կտոր: Վերնաշապիկի առաջամասերին մշակվում է վրադիր կտոր, որի վրա մշակվում են օղակներ և կարվում կոճակներ: Առաջամասն ունի երկու արտաքին կարեր, իսկ թիկունքն ամբողջական է և երկայնքով ունի երեք արտաքին կարեր: Թևքերի երկարությունը մինչև դաստակ՝ մշակված թեզանիքով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան, աջ թևքի ուսամասից 60 մմ ներքև «Պարեկային ծառայություն» թևքանշան: Թիկունքի վերևի մասում կարվում է սպիտակ գույնով ասեղնագործված «POLICE» բառը:

Ձախ կրծքամասում կարվում է կրծքանշանի ներդիր: Վերնաշապիկն ունի օդանցքեր՝ շնչողունակությունն առավելագույնին հասցնելու համար: Ուսադիրները՝ հանվող:

150. Տաբատ

Տաբատը - մուգ կապույտ գույնի կտորից: Տաբատն ունի ինքնակարգավորվող գոտկատեղ, մշտական զինվորական ծալքեր և պրոֆեսիոնալ հարթ ճակատային դիզայն: Գոտին՝ գոտեմակօղերով, կոճկվում է մեկ կոճակով, մետաղյա կեռիկով և շղթայով: Արտաքին գրպանները թեք են: Առաջամասում մինչև ծնկները մշակվում է աստառ: Թեք գրպանների ներքևի մասում ներկարվում են մեծ գրպաններ, հետևամասի աջ ու ձախ կողմում կափույրով փակվող ներկարված գրպաններ:

151. Սվիտեր

Մուգ կապույտ գույնի 57% պոլիէսթեր, 28% մշակված բուրդ, 15% ակրիլ, կլոր վզով, ուսադիրներով, ֆլիսով սահմանազատված, ավանդական ու կոշտ գործվածքով: Առջևի աջ մասում ամրացվում են «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ», իսկ թիկունքի մասում «POLICE» բառերը: Ուսագլուխների և արմունկների հատվածում ամրակցված է կապույտ գույնի կտոր, շախմատաձև կարով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան, աջ թևքի ուսամասից 60 մմ ներքև «Պարեկային ծառայություն» թևքանշան: Ձած կրծքամասում կարվում է կրծքանշանի ներդիր:

152. Կիսավերարկու

Մուգ կապույտ գույնի, մեմբրանե ծածկույթով, անջրանցիկ նեյլոնե կամ նույնատիպ կտորից, օձիքը կանգուն, հանովի ներդիրով: Օձիքը երկակի է, ներսում շղթայի տակ նախատեսված է գլխարկ: Գլխարկն ունի կարգավորիչ, կպչուն ժապավեն: Օձիքի մեջտեղում ներկարված է կախիչ: Թիկունքը բաղկացած է 3 մասից, վերևի մասում հորիզոնական՝ շղթայով փակվող ներկարված գրպան: Առաջամասը բաղկացած է 4 մասից, 2-րդ մասի ձախ կողմում կարվում է 35 մմ երկարությամբ օղակ՝ տեսախցիկի համար, իսկ աջ կողմի 2-րդ մասում կարվում է տարբերանշան և 35 մմ երկարությամբ օղակ՝ ռադիոկայանի խոսափողի համար: 3-րդ մասի աջ և ձախ կողմերում հորիզոնական գրպաններ՝ ներկարված ամբողջական լուսանդրադարձնող կափույրով և շղթայով փակվող, 4-րդ մասի աջ և ձախ կողմերում թեք գրպաններ՝

ներկարված ամբողջական կափույրով և շղթայով փակվող: Դիմացից ամբողջական կափույրով ներկարված պլաստմասսայե շղթայով և կոճգամներով: Կողային և կրծքային գրպանները՝ կայծակաճարմանդով: Կիսավերարկուն կողքերից ներքևի մասում անջատվում է շղթայով, որի վրա կան կարգավորիչներ: Թևքերի ծայրերին ներկարված են էլաստիկ ժապավեններ՝ կարգավորող կպչունակով: Թևքերի վրա 2 շերտով 20 մմ լայնությամբ կարվում է լուսանդրադարձնող ժապավեն: Գոտին կարված կիսավերարկուին, որի մեջ մշակված է էլաստիկ ժապավեն: Կիսավերարկուն ներսից՝ ներդիրի ձախ կրծքամասի հատվածում ունի ուղղահայաց գրպան: Ընդարձակ կտրվածք՝ շարժունակությունն ապահովելու համար: Ներդիրը բայկայի կտորից, ամբողջությամբ առանձնանում է շղթայով, որի վրա կարված է աստառ: Ներդիրի թևքերը ներսից նույնպես առանձնանում են պլաստմասսայե շղթայով: Թիկունքի մասում լուսանդրադարձնող «POLICE», իսկ աջ կրծքամասում «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան, աջ թևքի ուսամասից 60 մմ ներքև «Պարեկային ծառայություն» թևքանշան: Ուսադիրները՝ հանվող:

153. Կոշիկ կիսաճտքավոր ձմեռային

Սև գույնի կաշվից և նեյլոնից: Ներբանը պատրաստվում է մաշակայուն նյութից: Քթամասը և կրնկամասը կոշտ: Առաջամասի, միջնամասի և հետևամասի եզրերը բարձր ճնշման տակ միացված են ներբանին սոսնձման եղանակով: Առաջամասի կենտրոնական առանցքով տեղադրված են 5-6 զույգ մետաղյա փոլակներ: Կապումն իրականացվում է սև գույնի քուղերով: Քուղերն ամրացված են կտորի վրա լրացուցիչ կարված կաշվե եզրային ելուստին: Լեզվակը կարված է առաջամասից մինչև աջ ու ձախ չորրորդ առանցքը: Կոշիկը ներսամասից մինչև ներդիր բացվում է շղթայով: Շղթայի ամբողջ երկարությամբ առկա է կաշվե ներդիր: Կիսաճտքավոր կոշիկն ամուր և հարմարավետ է, նախատեսված է ձմռանը կրելու համար, առաջամասը և ճտքերը ջերմամեկուսիչ նյութից: Ներդիրը կտորե, երկակի խտության: Յուղի և սայթաքման դիմացկուն:

154. Կոշիկ սպորտային

Մև գույնի, կաշվից և բալիստիկ նեյլոնից: Ներբանը պատրաստվում է մաշակայուն նյութից, երկարաժամկետ օգտագործման համար: Քթամասը և կրնկամասը կոշտ, կաշվից: Առաջամասի, միջնամասի և հետևամասի եզրերը բարձր ճնշման տակ միացված են ներբանին սոսնձման եղանակով: Առաջամասի կենտրոնական առանցքով տեղադրված են 4-5 զույգ մետաղյա փոլակներ: Կապումն իրականացվում է սև գույնի քուղերով: Քուղերն ամրացված են կտորի վրա լրացուցիչ կարված կաշվե եզրային ելուստին: Կոշիկն ունի բարձր օդաթափանցություն, ամուր են և հարմարավետ: Ներդիրը կտորե, երկակի խտության: Յուղի և սայթաքման դիմացկուն:

155. Կեպի սպորտային (ամառային)

Կեպին մուգ կապույտ գույնի կտորից: Բաղկացած է թասակից և երկարացված՝ կոշտ կորացված գլխարկահովհարից: Թասակի առաջամասը կոշտացված է: Ետևի մասում կարգավորիչ: Առջևի կենտրոնական մասում կարվում են սպիտակ գույնով ասեղնագործված «POLICE», իսկ ետևում «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը:

156. Կեպի սպորտային (գարնանային, աշնանային)

Կեպին մուգ կապույտ գույնի, ջերմություն պահող կտորից: Բաղկացած է թասակից և երկարացված՝ կոշտ կորացված գլխարկահովհարից: Թասակի առաջամասը կոշտացված է: Ետևի մասում կարգավորիչ: Առջևի կենտրոնական մասում կարվում են սպիտակ գույնով ասեղնագործված «POLICE», իսկ ետևում «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը:

157. Կեպի սպորտային (ձմեռային)

Կեպին մուգ կապույտ գույնի, ջերմություն պահող կտորից: Բաղկացած է թասակից և երկարացված՝ կոշտ կորացված գլխարկահովհարից: Կեպին ներսի կողմից ունի տաք ներդիր, վզամասը և ականջները փակելու համար: Թասակի առաջամասը կոշտացված է: Ետևի մասում կարգավորիչ: Առջևի կենտրոնական մասում կարվում են ասեղնագործված «POLICE», իսկ ետևում «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը:

158. Գլխարկ ամենօրյա

Մուգ կապույտ գույնի կտորից, պոլիէթիլենային թաղանթով: Կազմված է սև, պլաստմասսայե գլխարկահովհարից և գլխարկաբոլորքից: Գլխարկաբոլորքը սև արհեստական կաշվից, վերևի մասում 38 մմ լայնքով ցանցավոր ժապավեն, սև

պլաստմասսայե ներդիրով: Գլխարկաբոլորքի վրա 2 արծաթագույն կոճակներով ամրացվում է երկշերտ զարդապարան (գոտի) 4 օղակներով: Առջևի կենտրոնական մասում ամրացվում է մեծ մետաղական գլխարկանշան, Հայաստանի Հանրապետության ոստիկանության զինանշանի տեսքով: Գլխարկի միջնամասում տեղադրված է սպունգ, մուգ կապույտ աստառ: Աստառի մեջտեղի մասում ամրակցված է արհեստական կաշվե կտոր տվյալների գրառումով:

159. Փողկապ

Սև կտորից: Ունի լայնացած ուրվագծով ձևվածք: Պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում՝ սուր անկյունով, վերևում՝ մշտական հանգույցով: Երկարությունը՝ ըստ պատվիրատուի պահանջի: Հետևի մասում կոճկվում է էլաստիկ կպչուն ժապավենով:

160. Արտացոլող ժիլետ

Երեսացուն պոլիէսթեր, արտացոլող դեղին գույնի գործվածք: Ժիլետը բաղկացած է անթև շապիկի տեսքով առաջամասից և հետևամասից: Առաջամասը և հետևամասը կողքերից ամբողջ երկայնքով սիմետրիկ կտրված: Առաջամասը հետևամասին միանաում է հորիզոնական ամբողջական ներքևում կարված կպչուն և արտացոլող 5 սմ լայնության ժապավենով: Ժապավենը չբացված վիճակում 20սմ վրադիր է, որը հնարավորություն է տալիս ընդարձակվելու: Ժիլետի առաջամասի աջ մասում տեղադրվում է «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ», իսկ թիկունքի մասում «POLICE» մակագրությունը: Ժիլետի միջնամասում երկու շրջագծով՝ առաջամասին և հետևամասին վրադիր կարվում են 5 սմ լայնությամբ անդրադարձնող լուսային ժապավենները: Նույն կերպ ժիլետի ուսամասից դեպի թիկունք կարվում են 1 շրջագծով՝ 5 սմ լայնությամբ անդրադարձնող լուսային ժապավենները:

161. Արտացոլող բաճկոնակ

Երեսացուն 100% պոլիէսթեր, ռետինապատ ծածկույթով 220 գ/մ^2 խտությամբ, արտացոլող դեղին գույնի գործվածք: Բաճկոնը բաղկացած է 2 առաջամասի լանջափեշերից և մեկ հետևամասից: Բաճկոնը եզրապատված է սև գույնի ժապավենով: Բաճկոնի առաջամասը մշակվում է կափույրով ծածկվող սև գույնի պլաստմասսայե շղթայով: Բաճկոնի առաջամասի կափույրի վրա կարվում են կպչուն ժապավենները: Բաճկոնի կողային մասերն ունեն մեծ բացվածքներ: Բաճկոնի աջ

կողմի կրծքամասում կարվում է «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» մակագրությամբ սև գույնի լուսանդրադարձնող կտորից՝ սպիտակ երիզով: Առջևի վերևի մասում կարվում է օղակ՝ տեսախցիկի համար: Ձախ կողմի կրծքամասին կարվում է տարբերանշանը: Բաճկոնի թիկունքային մասում տեղադրվում է «POLICE» մակագրությունը սև գույնի լուսանդրադարձնող կտորից՝ սպիտակ երիզով: Բաճկոնի միջնամասում 2 շրջագծով՝ առաջամասին և հետևամասին վրադիր կարվում են 5 սմ լայնությամբ անդրադարձնող լուսային ժապավեններ: Նույն կերպ բաճկոնի թևերին կարվում են 2 շրջագծով՝ 5 սմ լայնությամբ անդրադարձնող լուսային ժապավեններ: Թևքերի բերանները մշակվում են առաձգական ժապավենով: Կանգուն օձիքի հետևամասում տեղադրված է պլաստմասսայե շղթայով փակվող անձրևանոց /կապիշոն/: Անձրևանոցը երեսացուի կտորից: Դիմացի մասի եզրակարի միջով անցնում է սև պարան՝ պլաստմասսայե փականներով:

162. Ներքնաշապիկ

Սպիտակ գույնի բամբակյա կտորից: Ուղիղ ձևվածքով, կարճաթև, կլոր 20 մմ էլաստիկ ժապավենի օձիքով:

163. Ձեռնոց

Սև կաշվից, հինգմատնյա

164. Գոտի տաբատի

Սինթետիկ գործվածքից, 35 մմ լայնությամբ, մետաղական ճարմանդով:

165. Գրպանիկներ գոտու համար

Սև սինթետիկ նյութից, ամրացվում են գոտու վրա: Նախատեսված են հատուկ միջոցներ և պարագաներ կրելու համար:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23.12.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ